«ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆ – 150» ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ*

2021 թ. նոյեմբերի 1-ին լրացավ հայ դասական երաժշտության ականավոր ներկայացուցիչ, հայկական սիմֆոնիկ երաժշտության հիմնադիր, կոմպոզիտոր, դիրիժոր և երաժշտական-հասարակական գործիչ Ալեքսանդր Սպենդիարյանի (1871–1928) ծննդյան 150-ամյա հոբելյանը:

Խորհրդային Հայաստանի կառավարության հրավերով Ալ. Սպենդիարյանը 1924 թ. հոկտեմբերին տեղափոխվեց Երևան: Կոմպոզիտորի ստեղծագործության երևանյան շրջանն առանձնացավ բազմաժանրությամբ: Մի կողմից նա երգչախմբի, ձայնի ու դաշնամուրի կամ նվագախմբի համար կատարում է հեղափոխական երգերի, հայկական և ուկրաինական ժողովրդական երգերի մշակումներ, մյուս կողմից՝ գործիքավորում «Ալմաստ» օպերան, որն առանձնահատուկ տեղ ունի հայ երաժշտության պատմության մեջ: Սպենդիարյանի երևանյան ստեղծագործություններից հայկական սիմֆոնիզմի զարգացման համար կարևորագույն նշանակություն ունեցավ սիմֆոնիկ նվագախմբի համար գրված «Երևանյան էտյուդներ» սիմֆոնիկ պատկերը (1925), որտեղ կոմպոզիտորը շարունակեց «Ղրիմի էսքիզներում» սկիզբ առած, ժողովրդական կյանքից վերցրած պատկերների սիմֆոնիկ ուրվանկարների ստեղծման գիծը: Կոմպոզիտորն անդրադառնում է հայ ժողովրդի կենցաղին, ստեղծում ժողովրդական կյանքի տարբեր կողմերի ընդհանրացված կերպարներ:

Կոմպոզիտորի մահից հետո Երևանում սկիզբ առավ ու բեղմնավոր ճանապարհ անցավ ակադեմիական սպենդիարյանագիտությունը: Իսկ այդ ասպարեզում՝ Ալ. Սպենդիարյանի ստեղծագործական ժառանգության հրատարակման և գիտական ուսումնասիրության բնագավառում, ծանրակշիռ դեր կատարեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը:

Սպենդիարյանագիտության ասպարեզում Արվեստի ինստիտուտի աշխատանքներն ընթացան հետևյալ կարևոր ուղղություններով՝ Ալ. Սպենդիարյանի «Երկերի լիակատար ժողովածու»-ի ակադեմիական հրատարակության իրականացում՝ 11 հատորով (1951–1988), գիտական ուսումնասիրություններ [Քնարիկ Գրիգորյան. «Ալեքսանդր Սպենդիարով. կյանքը և ստեղծագործությունը» (1952), «Александр Спендиаров. Статьи и исследования» *գիտական հոդվածների ժողովածու (կազմող՝ Գևորգ Գյոդակյան, 1973) և բազմաթիվ գիտական հոդվածներ], կոմպոզիտորին առնչվող արխիվային փաստաթղթերի ու վավերագրերի հրապարակում [Գեորգի Տիգրանով.* А. Спендиаров. По материалам писем и воспоминаний (1953)*], կոմպոզիտորի գրական ժառանգության՝ «Նամականու» հրատարակում (կազմող՝ Քնարիկ Գրիգորյան, 1962), կոմպոզիտորի կյանքի և ստեղծագործության տարեգրության կազմում և հրատարակում (կազմող՝ Մարինա Սպենդիարովա, 1975), «Ժա-*

---

* *Ներկայացվել է 21. II. 2022 թ., ընդունվել է տպագրության 03. III. 2022 թ.:*

մանակակիցները Ալ. Սպենդիարյանի մասին» ժողովածուի կազմում և հրատարակում (կազմող՝ Ալեքսանդր Թադևոսյան, 1960) և այլն:

Կոմպոզիտորի հոբելյանների առիթով՝ 1951 և 1971 թվականներին, Արվեստի ինստիտուտը, իսկ մինչ այդ՝ ՀՍՍՀ ԳԱ արվեստների պատմության ու տեսության սեկտորը, կազմակերպել է հոբելյանական գիտական նստաշրջաններ:

Շարունակելով ավանդույթը՝ մեծ երաժշտի 150-ամյա հոբելյանի կապակցությամբ, Արվեստի ինստիտուտը՝ Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարանի և Հայաստանի կոմպոզիտորների միության հետ, 2021 թ. դեկտեմբերի 14–16-ին Երևանում՝ հեռավար ձևաչափով, գումարեց Ալ. Սպենդիարյանի կյանքի, ստեղծագործական, կատարողական ու երաժշտական-հասարակական գործունեության ուսումնասիրության, նրա թողած ժառանգության արժևորման հարցերին նվիրված «Ալեքսանդր Սպենդիարյան–150» միջազգային գիտական եռօրյա նստաշրջանը:

Միջգիտակարգային նստաշրջանի աշխատանքներին մասնակցեցին Հայաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Լատվիայի, Նիդերլանդների և Շվեդիայի գիտական համայնքների շուրջ 40 ներկայացուցիչներ՝ ինչպես երաժշտագետներ ու երաժիշտներ, այնպես էլ՝ արվեստաբաններ, գրականագետներ, մշակութաբաններ, փիլիսոփաներ: Նստաշրջանն իր շուրջը համախմբեց թե՛ վաստակաշատ գիտնականների, թե՛ երիտասարդ հետազոտողների:

Գիտական նստաշրջանի մասնակիցներին ողջունեցին և գիտական աննախադեպ միջոցառմանը բարեհաջող ընթացք մաղթեցին ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը, Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարանի տնօրեն Մարինե Օթարյանն ու Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ Արամ Սաթյանը:

Լիագումար նիստում հետաքրքիր ու արժեքավոր զեկուցումներով հանդես եկան՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բ. գ. դ., պրոֆ. Աելիտա Դոլուխանյանը՝ «Ալեքսանդր Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի լիբրետոն և Հովհաննես Թումանյանի «Անուշ» պոեմը», Լատվիայի Ի. Կոզակևիչի անվան ազգային մշակութային ընկերությունների ասոցիացիայի վարչության նախագահ, արվ. դ., պրոֆ. Ռաֆֆի Խաչանյանը (Ռիգա)՝ «Ալեքսանդր Սպենդիարյան. մի քանի հայացքներ այսօր», ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, արվ. դ., պրոֆ. Աննա Ասատրյանը՝ «ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ներդրումը ակադեմիական սպենդիարյանագիտության կայացման ու զարգացման գործում», Սանկտ Պետերբուրգի Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի անվան պետական կոնսերվատորիայի նվագախմբային ֆակուլտետի դեկան, արվ. թ., դոցենտ Անդրեյ Իվանովը (Ռուսաստան)՝ «Լարայինների համար գրված ստեղծագործությունները Ալեքսանդր Սպենդիարյանի ժառանգության մեջ», ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող, արվ. դ. Մարգարիտա Ռուխկյանը՝ «Ալեքսանդր Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի ավանդական բեմական հայեցակարգը», Սանկտ Պետերբուրգի Ա. Ի. Գերցենի անվան պետական մանկավարժական համալսարանի երաժշ-

տության, թատրոնի և խորեոգրաֆիայի ինստիտուտի դոցենտ, արվ. թ. Նադեժդա Մեդվեդևան՝ *«Ալեքսանդր Սպենդիարյանի ստեղծագործությունը պետերբուրգյան դաշնամուրային դուետի հայելիում», Կազանի մշակույթի պետական ինստիտուտի պրոֆեսոր, մշակ. դ., փ. գ. թ.* Տատյանա Գորդեևան *(Ռուսաստան, Թաթարստանի Հանրապետություն)՝ «Ալ. Սպենդիարյանի վոկալ երաժշտությունը կազանյան երգիչների ուսումնամանկավարժական պրակտիկայում և համերգային երգացանկում», Դնեպրոպետրովսկի Մ. Ի. Գլինկայի անվան երաժշտության ակադեմիայի ավագ դասախոս, մանկ. գ. թ.* Լարիսա Գոնտովայան *(Ուկրաինա)՝ «Ավանդույթի պարադոքսը. Ալեքսանդր Սպենդիարյան, Լև Ռևուցկի, Իգոր Ստրավինսկի», Կազանի մշակույթի պետական ինստիտուտի դոցենտ, արվ. թ.* Լիլյա Բորոդովսկայան *(Ռուսաստան, Թաթարստանի Հանրապետություն)՝ «Թաթարստանի Հանրապետության ժամանակակից երաժիշտների՝ Ալ. Սպենդիարյանի երաժշտության կատարողական մեկնաբանությունները», Մ. Կ. Ամմոսովի անվան Հյուսիս-Արևելյան ֆեդերալ համալսարանի մշակութաբանության ամբիոնի դոցենտ, արվ. թ.* Տատյանա Պավլովա-Բորիսովան *(Ռուսաստան, Սախա-Յակուտիայի Հանրապետություն)՝ «Հայաստան-Յակուտիա. «Ա»-ից «Ֆ» կոմպոզիտոր Հրանտ Գրիգորյանի ստեղծագործության մեջ», ՀՀ ԳԱԱ ավետի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվ. թ., դոցենտ* Անահիտ Բաղդասարյանը՝ *«Նմանակումը Ալ. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայում», Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի անվան պետական կոնսերվատորիայի ազգային երաժշտական մշակույթների կաբինետի վարիչ, արվ. թ., դոցենտ* Տատյանա Բրոսլավսկայան *(Ռուսաստան)՝ «Ժողովրդական գործիքային ավանդույթների փոխակերպումները Ալ. Սպենդիարյանի ստեղծագործության մեջ», ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվ. թ.* Մարիաննա Տիգրանյանը՝ *«Ռուսական ֆոլկլորն Ալ. Սպենդիարյանի ստեղծագործության մեջ» և Մոսկվայի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի ասպիրանտ* Ալեքսեյ Զաբրոդինը՝ *«Ալ. Սպենդիարյանի կյանքի և գործունեության մոսկովյան և պետերբուրգյան շրջանները (1890–1899)»:*

Դեկտեմբերի 15-ին գիտական նստաշրջանի առաջին նիստում (նիստի նախագահ՝ Մարինե Օթարյան*) ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բ. գ. դ.* Սուսաննա Հովհաննիսյանն *անդրադարձավ Սպենդիարյանի և Հովհ. Թումանյանի հանդիպմանը, որից սկիզբ առավ «Ալմաստ» օպերայի ստեղծման պատմությունը: Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս* Նաիրա Մաղոյանը *ներկայացրեց Սպենդիարյանի ստեղծագործական գործունեության երևանյան շրջանը: Դաշնակահար, կոմպոզիտոր* Կարին Հելման-Գևորգյանի *(Շվեդիա, Ստոկհոլմ) բանախոսությունը նվիրված էր Սպենդիարյանի ստեղծագործության շքերթին՝ սկսած Սկանդինավիայից, մասնավորապես՝ «Այ, վարդ» ռոմանսին, որը բանախոսի ջանքերով արդեն հնչում է շվեդերեն՝ շվեդ երգիչների կատարմամբ: Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական քոլեջի դասախոս* Լիանա Հարությունյանը *հանդես եկավ «Ալեքսանդր Սպենդիարյանը հայ մշակութային գործիչների հուշերում» զեկուցումով: Սպենդիարյանի և հայ արվեստագետների միջև ստեղծագործական կապերը*

բացահայտեց Հայաստանի ազգային պատկերասրահի հայկական գեղանկարչության բաժնի վարիչ Հայկուշ Սահակյանը: Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գիտաշխատող Աստղիկ Մարտիրոսյանը լուսաբանեց Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարանի և Կոմիտասի թանգարան-ինստիտուտի ընդհանրություններն ու առանձնահատկությունները կրթական ծրագրերում:

Նստաշրջանի երկրորդ նիստում (նախագահ՝ Լիլիթ Երնջակյան) Մարինե Օթարյանը ներկայացրեց «Ստեղծագործական երկրորդ կյանք. Թիֆլիս» զեկուցումը: Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի տնօրեն, արվ. թ., դոցենտ Համլիկ Հարությունյանը բացահայտեց ազգային ինքնության դրսևորումները Սպենդիարյանի ստեղծագործության մեջ: Ուշագրավ էին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, պ. գ. թ., դոցենտ Հռիփսիմե Պիկիչյանի դիտարկումները կոմպոզիտորի ստեղծած և «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերում կիրառված սպենդիարաֆոնի վերաբերյալ, որը բանախոսի հիմնավորմամբ՝ ավանդական նվագարանների «սիմֆոնիզացված» հետնորդն է: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի գիտաշխատող Արուսյակ Պետրոսյանը լուսաբանեց Սպենդիարյանի կապերը ժամանակակից հայ արվեստագետների հետ: Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի փոխտնօրեն Անի Ասատրյանը հանդես եկավ «Գեորգի Տիգրանովը Ալեքսանդր Սպենդիարյանի գործունեության ղրիմյան շրջանի մասին» բանախոսությամբ: Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարանի գիտաշխատող Ինեսսա Խաչատրյանը գիտական շրջանառության մեջ դրեց կոմպոզիտորի դստեր՝ Տատյանա Սպենդիարովայի հուշերը հոր մասին: Նիստը եզրափակեց Նունե Պողոսյան-Զելցբուրգի (UWC Maastricht, MA, Նիդերլանդներ, Մաաստրիխտ) «Ալեքսանդր Սպենդիարյանը աշխարհի երաժշտարվեստի համակարգում. էթնոերաժշտագիտական դիտարկումներ» բանախոսությունը:

Գիտական նստաշրջանի երրորդ նիստում (նախագահ՝ Մարգարիտա Քամալյան) Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս, արվ. թ., դոցենտ Աննա Հարությունյանը զեկուցեց Ալեքսանդր Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցի պատմության մասին: Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանի գլխավոր ֆոնդապահ Սոֆյա Սարյանը քննության առավ Ալ. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի սարյանական ձևավորումը: ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայցորդ Քրիստինա Աբրահամյանը ներկայացրեց դրվագներ Ալ. Սպենդիարյանի և Հովհաննես Հովհաննիսյանի բարեկամության պատմությունից: Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի արվեստի պատմության տեսության և մշակութաբանության ամբիոնի դասախոս, արվ. թ., արվեստաբան Նարե Նադարյանը քննության առավ Սպենդիարյանին նվիրված Արա Սարգսյանի ու Ղուկաս Զուբարյանի կերտած արձանները: Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջի դասատու Նինա Հակոբյանի զեկուցումը նվիրված էր Սպենդիարյանի մասին ժամանակակիցների հուշերին: Նիստը եզրափակեց Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարանի գլխավոր ֆոնդապահ Աստղիկ Հարությունյանը՝ «Դիրիժորական փայտիկի կախարդական ուժը» զեկուցմամբ:

Նստաշրջանի եզրափակիչ՝ չորրորդ նիստը (նախագահ՝ Մարիաննա Տիգրանյան*) մեկնարկեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող, արվ. դ., պրոֆ.* Լիլիթ Երնջակյանի *«Ալեքսանդր Սպենդիարյանի Արևելքը» բանախոսությամբ: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի թատրոնի բաժնի առաջատար գիտաշխատող, արվ. դ.* Նազենիկ Սարգսյանը *բացահայտեց Սպենդիարյանի ստեղծագործության նշանակությունը պարարվեստի բնագավառում: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտքարտուղար, արվ. թ., արվեստաբան* Մարգարիտա Քամալյանը *հանդես եկավ «Ալեքսանդր Սպենդիարյանը հայ նկարիչների աչքերով» զեկուցմամբ: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվ. թ., դաշնակահար* Լիլիթ Արտեմյանն *անդրադարձավ կոմպոզիտորի դաշնամուրային ստեղծագործությանը: Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարանի ավագ գիտաշխատող* Հասմիկ Համբարյանը *ներկայացրեց «Գրական հերոսների երաժշտական կերպավորումն Ալեքսանդր Սպենդիարյանի մելոդեկլամացիաներում» բանախոսությունը: Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի դասախոս, արվ. թ., դոցենտ* Աննա Թամիրօղլյանը *ձևակերպեց Սպենդիարյանի «Գուշակուհին» ստեղծագործության կոմպոզիցիոն որոշ սկզբունքները: Նստաշրջանի աշխատանքները եզրափակվեց* Աննա Ասատրյանի *«Ալեքսանդր Սպենդիարյան և Հովհաննես Նալբանդյան. էջեր ստեղծագործական համագործակցության» բանախոսությամբ:*

Այսպիսով՝ զեկուցումների թեմատիկայի ընդգրկմամբ ու մասնակիցների աշխարհագրությամբ «Ալեքսանդր Սպենդիարյան–150» միջազգային գիտական նստաշրջանի արդյունքներն արտացոլեցին միջազգային սպենդիարյանագիտության արդի վիճակն ու կարևոր ներդրում դարձան ակադեմիական սպենդիարյանագիտության մեջ:

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ